

դակաթի սուրբ Աթոռոյս էջմիածնի, առաջնորդ Ամատունեաց սրբոյ Կարապետիս որ ի ստորոտս Արագածու եւ ի դաւառիս Կարբոյ եւ յԱնրերդոյ... յուսացեալ... յամենասուրբ Երրորդութիւնն, որ ետ կարողութիւն նորոգել զսուրբ տաճարքս զայսոսիկ աստուածարնակ. որ եւ ամենայն զարդիւք շնորհօքն Քրիստոսի զարգարեցի զսուրբ Եկեղեցիքս, ամենայն գոյականօք, շարժուն եւ անշարժուն, հոգեւոր եւ մարմնաւոր շքեղութեամբ» :

Թ. Ղուկաս վ. Գառնեցի. Խաչատուր Երնջակցի 1634ին թուելով Մովսիսի աշակերտներն եւ իւր աշակերտակիցները կը գրէր⁶. «Յիշեսջիք հանդերձ հարազատ աշակերտաւքն՝ տէր Թումայ վարդապետն, տէր Արիստակէս վարդապետն, տէր Զաքարիա վարդապետն, տէր Եսայիա վարդապետն, տէր Ակոր վարդապետն, տէր Գրիգոր վարդապետն, տէր Խաչատուր վարդապետն, տէր Ղուկաս վարդապետն, որ յայսմ ամի վախճան էառ՝ դառնիկն Գառնեցին Գառնայկէրի վանքն, յիշեսջիք ի Քրիստոս» : Սա նոյն է սուանց տարակուսի այն Գառնեցի Ղուկաս գրչին հետ, որ օրինակած էր էջմիածնի Թ. 2372 ձեռագիրը :

Ժ. Թովմաս վարդապետ, զոր յիշեց Խաչատուր, կը յիշուէր նաեւ Ղուկաս Գառնե-

⁶ էջմ. 1184 :